

ՔԱՐՏԷԶ ՀԱՅ ՀՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Տառերի գիւտի 1500 ամեայ տարեդարձը մի գեղեցիկ առիթ էր ցոյց տալ հայ գրի զարգացման պատկերն այդ երկար դարերի ընթացքում: Հանգուցեալ Ալիշանի «Այրարատը», «Սիսականը», «Սիսուանը», հ. Տաշեանի «Մայր ցուցակը», Քարամեանի և ուրիշ մանր ցուցակներ առանձին տետրակներով և «Հանգէս Ամսօրեայ» ի մէջ, Մեսրոպ Կարգ. Տ. Մովսիսեանի *Исторія Перевода Библии*, հին. տալիս են շատ զնահատելի նիւթեր, բայց նոքա բաւարար չեն հայ գրչութեան արուեստի զարգացման, նորա ճոխութեան, և հարստութեան մասին ամբողջական գաղափար կազմելու: Այդ հնարաւոր չէ և այժմ, քանի ձեռքի տակ չունինք հայ ձեռագիրների գլխաւոր ժողովածուների՝ Մ. Աթուռի, Երուսաղեմի Ս. Յակոբեանց, Վենետիկի Մխիթարեանց մատենադարանների՝ գիտնական ցուցակներ և վանքերի արձանագրութիւնների նոյնատիպ հրատարակութիւններ: Ներկայումս միայն մի համեատ փորձ ենք անում, հայ գրչութեան արուեստի զարգացման ուրուագիծը տալ, օգտուելով գլխաւորապէս Մ. Աթուռի և մասամբ Երուսաղեմի Հայոց մատենադարանների անբաւ գանձերից: «Շողակաթ»-ի ներկայ համարի մէջ տալիս ենք այդ աշխատութեան Քարտէզը անհրաժեշտ տեղեկութիւններով, իսկ ուսումնասիրութիւնը կմնայ հետեւեալ համարում հրատարակել:

Բացի ձեռագիրներից տալիս ենք և հնագոյն արձանագրութիւնների օրինակներ, որոնց նոյնատիպ հրատարակութիւնը առաջին անգամն է կատարւում. նոքա բաւական չեն հնագրական հարցերին բաւարարութիւն տալու, որքան արձանագրութիւններին է վերաբերում, և այդ էլ չէ նրանց ժողովածուիս մէջ առնելու գլխաւոր պատճառը, այլ լրացնել այն պակասը, որ ունինք հայ հին ձեռագիրների կորուստով: Է. դարու մի քանի ուրիշ արձանագրութիւնների համար՝ Բագաւանի, Բագարանի, Նախճաւանի, Ալամանի, Մրենի, մատնացոյց ենք անում Յովսէփ Օրբելիի յօդուածը, որ նորերս հրատարակեց *Христ. Востокъ*-ի մէջ, Томъ II. выпускъ I. СП. 1913., աւելորդ համարելով նրանց կրկնութիւնն ժողովածուիս մէջ (Բագաւանինը չունինք): Մրենի արձանագրութիւնը կրկնուած է մեր Քարտիզում, որովհետեւ կլիթէն արդէն նախօրօք պատրաստ էր: Աւելորդ չհամարեցինք նաեւ տարբեր նիւթերի վերայ եղած գրութիւնների մի քանի օրինակներ տալ, մանաւանդ որ նրանք հագուազիւս են: